Հավելված
ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարի
2025 թվականի մարտի 14-ի N 96-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ղեկավարը հայտարարում է կրկնակի մրցույթ «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Թումանյան համայնքի «Դսեղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի.

1.Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, մինչև ***2025 թվականի մարտի 4-ը դիմած*** քաղաքացիները:

2.Կրկնակի մրցույթին մասնակցելու համար նոր դիմումներ չեն ընդունվում:

3. Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

4. Կրկնակի մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Թումանյան,քաղաք Թումանյան, Կենտրոնական փողոց, շենք 1), ***2025 թվականի մարտի 17-ին, ժամը՝ 11:00-ին:***